

ՀԱՅԱԶԳԻ ՍՐԲԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1982 թվականին Ստամբուլում լույս տեսավ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի «Հայազգի սուրբեր» գիրքը, որով ամբողջացվեց սրբական հեղինակի՝ սրբերի կենսագրություններին նվիրված եռահատորը: Եթե առաջին գիրքը նվիրված էր աստվածաշնչական սրբերին և կոչվում էր «Աստվածաշնչական սուրբեր», իսկ երկրորդը՝ «Համաքրիստոնեական սուրբեր», ապա սույն՝ երրորդ հատորը ամբողջապես նվիրված է հայազգի սրբերին:

«ՀԱՅԱԶԳԻ կամ հայացած սուրբերն ալ պատկերացնելու ատեն կհետևինք այն ծրագրին, զոր գործադրած էինք Բ հատորի պատրաստության ընթացքին, այսինքն մոտենալ անոնց դաս առ դաս, համաձայն այն ասպարեզին կամ ընկերային դասակարգին, որուն մեջ ինքզինքը սրբացուցած է տվյալ դեմքը: Ուրեմն ասոնք ալ կներկայացնենք հետևյալ հինգ խումբերով:

ա. Հոգևորականներ: բ. Ճգնավորներ: գ. Պետական դեմքեր և զորականներ: դ. Կույսեր: ե. Մնացյալ մարտիրոսներ»:

Ներկա ժողովածուի մեջ կետեղված են շուրջ 100 անհատ կամ խմբական հայազգի սրբերի կենսագրություններ: Յուրաքանչյուր սրբի կամ խմբական սրբերի կենսագրությունները ներկայացնելուց առաջ սրբական հեղինակն օգտագործել է հրապարակի վրա եղած բոլոր գրավոր աղբյուրները՝ ընդհուպ մինչև սկզբնաղբյուրը:

«Փոխան ներածականի» վերնագրի տակ սրբական հեղինակը գրում է. «...ներկա հատորին մեջ խորհրդածության նյութ կուզենք դարձնել համառոտ կերպով հետևյալ քանի մը կետերը, որոնք մեր կարծիքով սերտորեն կապ ունին մեր Եկեղեցիի ներկային և ապագային հետ, և հետևաբար որքան հավերժական՝ նույնքան ալ այժմեական հարցերեն»:

ա) ՉԽԶԵԼ ԿԱՊԸ ՄԵՐ ԱՍՏՈՒԾՈՒՅՆ ՀԵՏ:

բ) ՉԿՈՐՍՆՑՆԵԼ ՀԱՎԱՏՔԸ:

գ) ՏԵՐ ՄՆԱՆՔ ՄԵՐ ՀՈԳԵՎՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ:

դ) ՍՐԲՈՑ ԿՅԱՆՔԵՐԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑՆԵՐԵՆ ԵՆ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔ ՄՇԱԿԵԼՈՒ:

Ահա այս չորս դասդասում-վերնագրերի տակ հեղինակը մանրամասնորեն տալիս է բացատրություն հատորի շարադրանքի ներքին էության հույժ կարևորության մասին:

Կենսագրությունների շարքն սկսվում է Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետով (240—326):

«Պատշաճ էր,—գրում է հեղինակը,—որ հայազգի սուրբերու շարքը բանայինք մեր հավատքի հայր այս մեծ հայրապետով: Որովհետև՝ բացի ժամանակագրական կարգե՝ մյուս բոլոր մարդերուն մեջ գլուխը կկենա Հայ Եկեղեցիի հատուկ սուրբերուն: Ամենեն շատ չարչարանք կրողն է. ամենեն սրբակյաց անձն է. ամենեն մեծ ու մնայուն արդյունքներ ձգողը եղավ Հայց. Եկեղեցիին»:

Ժողովածուն բաղկացած է երկու մասից,

որոնցից յուրաքանչյուրն ունի իր ենթախորագրերը.

Ա մաս. Տոնելի սուրբեր

Գլուխ Ա. Եկեղեցական դեմքեր.

Գլուխ Բ. Հայ ճգնավորությունը և վանականությունը.

Գլուխ Գ. Թագավորներ, իշխաններ և զորականներ.

Գլուխ Դ. Սրբուհիներ.

Գլուխ Ե. Մարտիրոսներ:

Բ մաս. Սրբակենցաղ անձեր և մեծագործ դեմքեր որոնք Տոնացույց չեն անցած

Երկրորդ մասը բաղկացած է ութ գլուխներից:

Գիրքն աչքի է ընկնում իր առինքնող և պատկերավոր շարադրանքով: Այն անգնահատելի նվեր է հայ քրիստոնեական աշխարհին:

Այսուհետև «Էջմիածին» ամսագրի ընթերցողներին պարբերաբար կներկայացնենք «Հայապգի սուրբեր» հատորից ընտրվի քաղվածքներ:

Ստորև հաճույքով արտատպում ենք Ամենապատիվ Պատրիարք սրբազան հոր վերոհիշյալ գրքից Սուրբ Գրիգոր Լուսավորչին նվիրված հատվածը:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
(240—326)

Պատշաճ էր, որ հայապգի սուրբերու շարքը բանայինք մեր հավատքի հայր այս մեծ հայրապետով: Որովհետև՝ բացի ժամանակագրական կարգե՝ մյուս բոլոր մարդերուն մեջ գլուխը կկենա Հայ Եկեղեցիի հատուկ սուրբերուն: Ամենեն շատ չարչարանք կրողն է. ամենեն սրբակյաց անձն է. ամենեն մեծ ու մնայուն արդյունքներ ձգողը եղավ Հայց. Եկեղեցիին: Մեկ խոսքով՝ Հայ Եկեղեցիի մեծագույն գործիչը և ավետարանիչն է, այն աստիճան որ հետևողությամբ «Երեքտասաներորդ» Պողոս առաքյալի՝ ինքն ալ կոչվեցավ «Չորեքտասաներորդ առաքյալ» մեր մեջ: Եթե ՀԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ կոչված սքանչելի ճառերու հավաքածոն, կամ իր առաջին կենսագիր Ագաթանգեղոս պատմիչի գրքին մաս կազմող «ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՍԲՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ» կոչեցյալ քարոզներն ալ իրեն վերագրենք, ինչպես կընե արդարև Պատմությունը, Գրիգոր կըլլա նաև մեր մեծագույն աստվածաբանը և քարոզիչը, որուն անունով կարևոր գրավոր ժառանգություն մըն ալ ձգված է մեզի:

Հիմնադիր կոչվելու աստիճան վերանորոգիչը և վերակենդանացնողը եղավ Հայ Եկեղեցիին: Իրմով սկսավ Հայոց Կաթողիկոսությունը: Առաջին Հայ եկեղեցիները, որոնց գլուխը կկենա Էջմիածնի Մայր տաճարը, իր նախաձեռնությամբ կառուցվեցան: Ու վերջապես՝ ամբողջ հայ ժողովուրդը, իր թագավորով, պալատականներով, իշխաններով, բանակով, ազատորյարով ու ռամիկ զանգվածով, առաջնորդեց Ավետարանի լույսին, ժառանգելով արժանապես ԼՈՒՍԱՎՈՐԻՉ պանծալի տիտղոսը: Մեր Եկեղեցիին միակ ՍՈՒՐԲՆ է, որ համաքրիստոնեական ընդունելության և տոնակատարության արժանացած է*:

Համաձայն մեր ձեռքը գտնված պատմական տվյալներու ծնած է հայ հողի վրա: Հավանաբար այդ օրվան հայոց մայրաքաղաք Վաղարշապատին՝ այսօրվան Էջմիածին քաղաքին մեջ. քանի որ անոր ծննդյան օրերուն իր ծնողքը, հանդերձ ընտանյոք, հյուր էին հայոց Խոսրով թագավորին: Իսկ ազգային ավանդությունը կհաստատե որ իր մայրը հղացած է վայն, հայոց Արտաշատ գավառին մեջ, մոտերը այսօրվան Ս. Թադեի նշանավոր վանքին: Անորոշ կմնա իր ծննդյան թվականը որ կտարուբերի 239—257-ի միջև: Մենք, հետևելով **Օքսֆորդյան** և ՍՐԲՈՅ բառարաններուն, դրած ենք վայն 240 թվականին:

Իր մանկության պարագաները որքան եղերական՝ նույնքան ալ հույժ հետաքրքրական են: Որդին է Անակ Պարթև իշխանին, որ Հայաստան դրկված էր պարսից Արտաշիր Սասանյան թագավորին կողմե, ամբողջ ընտանյոք և իբրև թե հալածական, որպեսզի նենգությամբ սպաննե հայոց թագավորը, վերջ տալու համար հայ Արշակունի թագավորական գերդաստանին, ինչպես վերջ տրված էր անոր մայր ճյուղին Պարսկաստանի մեջ: Անակ կհաջողի սպաննել հայոց Խոսրով թագավորը. բայց իր կարգին կսպաննվի հայ իշխաններու կողմե, և կբնաջնջվի իր ընտանիքը, մեռնող թագավորին հրամանով: Այս կոտորածեն կպատին երկու մանուկներ. մեկը կփախցվի ետ Պարսկաստան, իսկ մյուսը՝ Կեսարիա: Այս վերջին մանուկն է, որ կստանա Գրիգոր անունը և կդառնա հայոց ապագա ԼՈՒՍԱՎՈՐԻՉԸ:

---

* Ոմանք կհարցնեն. քանի որ Գր. Լուսավորիչն ալ համաքրիստոնեական սուրբ է, ինչո՞ւ անոր անունը չերևիր «ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ» հատորին մեջ: Պասասխանը հետևյալն է: «Համաքրիստոնեական» սուրբերը մենք առած ենք մեր քույր Եկեղեցիներեն. մինչդեռ Գր. Լուսավորիչը անոնք առած են մեզմե: Նախ Հայ Եկեղեցին է, որ սկսած է հիշատակել վայն, որմե անցած է ուրիշ Եկեղեցիներուն: Հետևաբար «Համաքրիստոնեական» ըլլալով հանդերձ՝ հիմնականին մեջ Հայ Եկեղեցիի հատուկ սուրբ մըն է Գր. Լուսավորիչ:

Գրիգոր Կեսարիո մեջ կիյնա քրիստոնեական շրջանակի մեջ և հետևաբար կստանա քրիստոնեական հիմնական դաստիարակություն և հունական բարձր կրթություն, հոգածությամբ նույնինքն Կեսարիացի Եվթաղիոսի, որուն քույրը կնկատվի Գրիգորը փախցընող ստնտուն, որուն անունն էր Սոփիա: Կեսարիո օրվան արքեպիսկոպոսը, Փիրմիլիանոս, կարևոր դեր ունեցած կնկատվի անոր դաստիարակության մեջ: Երբ չափահաս կըլլա, կամուսնանա Մարիամ անունով օրիորդի մը հետ, որ կնկատվի քույրը Սեբաստացի Աթանագինես եպիսկոպոսին, որ նահատակվելով անցած էր սուրբերու կարգը, և որուն նշխարները Հայաստան պիտի բերեր Գրիգոր իր ձեռնադրութենեն հետո: Ունեցավ երկու զավակներ Վրթանես և Արիստակես:

Ատեն մը հետո Գրիգոր Աստուծո ծառայելու կոչում զգալով իր մեջ, փոխադարձ համաձայնությամբ և սիրով բաժնվեցավ իր կնոջմե, որ կուսանոց մտավ, իսկ զավակները հանձնվեցան իրենց ծանոթ ու վստահելի անձերու խնամքին ու դաստիարակության: Այդ օրերուն, հայոց սպանյալ թագավորի որդին Տրդատ՝ հռովմեական բանակով մը կանցներ Կեսարիո կողմերեն երթալ տիրանալու համար իր հոր գահին: Գրիգոր օգտվելով առիթեն մտավ Տրդատի ծառայության մեջ երբ շուրջ 35 տարեկան հասուն անձնավորություն մըն էր: Տրդատ գնահատելով անոր բարձր ուսմունքը և կարողությունները, կարգեց զայն արքունի դիվանապետ:

Տրդատ կարևոր հաղթանակ մը շահելե հետո զոհ մատուցանելու համար եկավ հայոց կռապաշտական կեդրոններեն մեկը եղող Երիզա ավանը—ետքեն ծանոթ Երզնկա՝ և այժմ Էրզինճան անուններով: Այստեղ կըգտնվեր հայոց ամենեն ժողովրդական դիցուհիին, Անահիտի ոսկի արձանը: Զոհագործության հաջորդող գինարբուքի ընթացքին Տրդատ հրամայեց Գրիգորին, որ դալար ճյուղերե պսակ մը դնե Անահիտի արձանին առջև. Գրիգորի մերժելուն վրա՝ մեջտեղ ելավ իր քրիստոնյա ըլլալը և դատապարտվեցավ ահավոր չարչարանքներու, որոնցմե 12 հատ կհիշվին իր կենսագրության մեջ, և որոնցմե մեկը միայն կրնար սպաննել ոևէ սովորական մահկանացու մը: Գրիգոր ոչ միայն գերբնական համբերությամբ կտոկար անոնց, այլ նաև քաջ պատասխաններով կքարոզեր քրիստոնեությունը. (Ագաթ. Ե—Ժ հատվածները): Ի հիշատակ այս չարչարանքներուն՝ Երզնկայի մեջ գոյություն ուներ «Լուսավորչի Չարչարանաց վանքը, քաղաքեն դեպի հարավ երկու ժամ հեռու» (Ալգապատում հատած 48):

Ի վերջո մեջտեղ ելավ նաև Գրիգորին Անակի որդի ըլլալը, ինչ որ ավելի կատղեցուց Տրդատը, որ հրամայեց նետել զայն Արտաշատի **Խոր Վիրապ** կոչված ահավոր բանտը, որ սահմանված էր առ հասարակ մահվան դատապարտված մեծ հանցապարտներու: Այստեղ նետվողը կարճ ժամանակ հետո կմեռներ անսվաղութենե, օձերու խայթումներե և ապականած օդեն: Սակայն Գրիգոր կրցավ այստեղ ապրիլ 13—15 տարիներ, Աստուծո նախախնամությամբ և հոգածությամբ քրիստոնյա կնոջ մը, որ միջոցը գտած է ուտելիք նետելու վիրապեն ներս: Այս վիրապը. մինչև օրս կպահե իր գոյությունը Արտաշատ քաղաքի մոտիկ բլուրի մը վրա, պատմական վանքի մը մեջ, և մեր Եկեղեցիի կարևոր ուխտատեղիներեն մեկն է:

Ապա Տրդատ հալածանք հանեց քրիստոնյաներու դեմ, որու ընթացքին նահատակվեցան Հռիփսիմյանց կույսերը, ինչ որ Տրդատի և իր պալատականներեն շատերուն ջղագարության կամ խելագարության պատճառ եղավ: Տրդատի քույրը, Խոսրովիդուխտ, երազ կտեսնե, ուր կթելադրվի իրեն որ գրիգոր միայն պիտի կրնար բուժել իր եղբայրը: Ոչ ոք կարևորություն կուտա երազին, որովհետև ամեն մարդ այնպես համոզված էր, որ Գրիգոր շատոնց մեռած էր արդեն վիրապին մեջ: Երազը բազմիցս կրկնվելուն, մարդ կղրկեն Արտաշատ և ի մեծ զարմացումն ամենքին, ողջ կգտնեն զայն Խոր Վիրապին մեջ: Կբերեն Վաղարշապատ, ուր Տրդատ և մյուս հարվածյալները մասամբ մը զգաստության կբերվին Գրիգորի աղոթքով: Ապա հավաքել կուտա Հռիփսիմյանց անթաղ մնացած մարմինները և կվետեղե զանոնք հատուկ սնտուկներու մեջ, ի վերջո թաղելու համար անոնց նահատակության վայրերուն վրա կառուցված մատուռներուն մեջ: Գրիգոր կսահմանե Հինգօրյա խիստ ծոմապահություն, ըստ Տերունական խոսքին, թե կարգ մը «Դևեր» որոնք պատճառ կըլլան մարդոց հոգևոր հիվանդություններուն, «կելլեն միայն պահքով և աղոթքով»: Որմե հետո կրկին կաղոթե Գրիգոր, ու սմենքն ալ կբուժվին բոլորովին: Այս խիստ պահեցողության հիշատակն ալ կպահվի մեր Եկեղեցիին մեջ մինչև այսօր **«Առաջավորաց Պահք»** անունով որ կհանդիպի Մեծ Պահքեն երկու շաբաթներ առաջ: Տրդատի, պալատականներու և ամբողջ բանակի ապաշխարության շրջանը կշարունակվի երկու ամիսներ ևս, որուն ընթացքին Գրիգոր անընդհատ կքարոզե և կսորվեցնե ամենքին քրիստոնեական կրոնքին բոլոր հիմնական սկզբունքները: Այս քարոզությունը պահված է անոր վարքը գրող Ագաթանգեղոս պատմիչի գրքին մեջ. «ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՍԲՐ-

ԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ» անվան տակ (ԻԳ—ՂԸ հատվածներ) որ կգրավե գրքին պարունակության ավելի քան կեսը:

Վիրապեն ելքը տեղի ունեցավ 301-ին վերջերը, իսկ քարոզությունը կշարունակվի մինչև 302-ի սկիզբները: Այս ատեն է, որ Ս. Գրիգոր կունենա իր նշանավոր տեսիլքը, ուր Աստուծո Միածին Որդին կիջնե Արարատյան դաշտը, ու կհայտնե չորս սրբատեղիներու կառուցման վայրերը և շինվելիք եկեղեցիներու ձևերը: Կշինվին արդարև երեք վկայարաններ. մեկը Հռիփսիմեի և իր 33 ընկերներու նահատակության վայրը. երկրորդը՝ Գայիանեի և երկու ընկերներու մարտիրոսացած տեղը և երրորդը կույսերու բնակավայր եղած Հնձանին վրա, ուրկե տեսած էր Գրիգոր այս տեսիլքը: Այս վկայարաններուն մեջ կթաղվին նահատակ կույսերու մարմինները: Այս վկայարան-եկեղեցիներն ալ կպահեն իրենց գոյությունը մինչև այսօր, Էջմիածին քաղաքի շրջակայքը: Իսկ Միածնի իջման վայրը շրջապատեց հատուկ որմով, ոյուն մեջտեղը բարձրացուց մեծ խաչ մը. և իր ձեռնադրութենեն հետո միայն, 303-ին, կառուցանել տվավ հայոց Մայր տաճարը, և համայն քրիստոնեության առաջին աղոթավայրը, որ երբեմն շինված ըլլա հողին մակերեսը: Իսկ 302-ին է, որ Տրդատ հատուկ հրովարտակով քրիստոնեությունը պետական կրոնք հռչակեց Հայաստանի մեջ:

Յարդ կատարված բոլոր գործերը Գրիգոր ի գլուխ հանած էր աշխարհական վիճակի մեջ: Սակայն երբ ապաշխարած արքունիքը, բանակը և ժողովուրդը պատրաստ էին մկրտության համար և պետքը զգացվեցավ Եկեղեցին օժտելու հատուկ ժամապաշտությամբ և այլ կարգ կանոններով, այն ատեն անհրաժեշտ տեսնվեցավ կարիքը կարգավոր հոգեվորականներու: Ամենքի փափաքով Գրիգոր ղրկվեցավ Կեսարիա ձեռնադրության համար, ուր արդարև ստացավ եկեղեցական բոլոր կարգերը, մանրներեն մինչև բարձրագույն եպիսկոպոսական աստիճանը և ճանչվեցավ արքեպիսկոպոս կամ կաթողիկոս Հայոց աշխարհին: Կեսարիայեն մեկնելու ատեն ստացավ նաև Հովհաննես Մկրտչի նշխարներեն մեծ մաս մը. ապա հանդիպելով Սեբաստիա՝ այնտեղեն ալ վերցուց իր ապգական Աթանագինես նահատակյալ եպիսկոպոսի մարմինը, և երկու քաղաքներեն ու շրջանակներեն հավաքած հոգևորականներու մեծ խումբով վերադարձավ Հայաստան:

Ճամբուն վրա առաջին անգամ հանդիպեցավ Տարոն գավառը, այսօրվան Մուշ քաղաքը և շրջակա երկրամասը, ուր չէր հանդիպած առաջին քարոզության ընթացքին, և ուր տակավին կշարունակվեր կռապաշտությունը, կործանեց կուռքերը, և անոնց մեհյանները նորոգելե հետո սրբագործելով վերածեց քրիստոնեական աղոթավայրերու: Շինեց հատուկ վանք, որ կոչվեցավ Ս. Կարապետ, որովհետև անոր մեջ դրավ Ս. Հովհաննես Կարապետի նշխարները, և որ դարձավ Հայ Եկեղեցիի ամենեն նշանավոր ուխտատեղին: Այս պատմական վանքը այսօր հիմնահատակ կործանած է: Ուրեմն Տարոն գավառին մեջ շինվեցան և նվիրագործվեցան մեր առաջին եկեղեցիները, և այստեղեն սկսավ հայ ժողովուրդին մկրտությունը մեծամեծ վանգվածներով. տասնյակ հազարներով, հարյուր հազարներով:

Տարոնի մեջ Եկեղեցին ամուր հիմքերու վրա դնելե և հոգևորականներ նշանակելե հետո Ս. Գրիգոր շարունակեց իր ճամբան դեպի երկրին մայրաքաղաքը, Վաղարշապատ: Տրդատ իմանալով Գրիգորի գալուստը՝ ահապարեց ու ընդառաջ եկավ Լուսավորչին, հետն ունենալով իր Աշխեն թագուհին և Խոսրովիդուխտ քույրը և պալատական իշխանները՝ ի գլուխ հսկա բանակի մը, մինչև Բագավան, որ կրնար կես ճամբան նկատվիլ Տարոնի և Վաղարշապատի միջև: Այստեղ է, որ կատարվեցավ Տրդատի, իր հետևորդներուն, բանակին և ժողովուրդի հսկա վանգվածին մկրտությունը: Եփրատի արևելյան կամ հարավային ճյուղը կալմող Արածանի գետի ակունքներուն մեջ: Արածանի այսօր կկոչվի Մուրատ Սու:

Երբ հասան Վաղարշապատ, Գրիգորի առաջին գործը եղավ պատարագի քարե սեղաններ կանգնել Հռիփսիմյանց կույսերու նահատակությանց վայրերուն վրա նախապես իր կառուցանել տված վկայարաններուն մեջ: Ապա ձեռնարկեց շինելու Էջմիածնի Մայր տաճարը, որ թագավորի, իշխաններու և հայ ժողովուրդի սերտ համագործակցությամբը ավարտեցավ նույն տարին, 303-ի ամառը և օծումը կատարվեցավ Վերափոխման տոնի նախօրյակին: Ասկե հետո կրկին ձեռնարկեց Գրիգոր ընդարձակ և ընդհանուր քարոզության, Ավետարանի լույսը և ճշմարտությունը տանելով ոչ միայն Հայաստան աշխարհի ամեն կողմերը, այլ նաև անոր սահմաններեն դուրս շրջակա երկիրները: Հյուսիսեն՝ վրացիներուն, հյուսիս արևելքեն աղվաններուն և այլ կովկասյան ցեղերուն. հարավ արևելքեն՝ ատրպատականցիներուն և կորդուքներու—քյուրտերու—և այլ շատ մը ցեղախումբերու, որոնցմե 7—8 հատին անունները կուտա պատմիչը, և որոնք այսօր գոյություն չունին այդ անուններով: Այնպես որ Լուսավորչի քարոզությունը և գործունեությունը կտարածվեր Կովկասեն մինչև Միջագետք, Եփրատեն մինչև Կասպից ծով: Կով-

կասի բարբարոսներուն իբրև քարոզիչ՝ և Աղվանից իբրև կաթողիկոս ղրկեց իր թոռը, Գրիգորիսը: Ձեռնադրեց նախ 12 եպիսկոպոսներ, որոնք կազմեցին Հայրապետանոցի «Երկոտասանից ժողովը»: Եվ ապա բազմաթիվ ուրիշ եկեղեցականներ ու եպիսկոպոսներ՝ երկրի ամեն կողմերուն համար: Հաստատեց դպրոցներ, երկրի հարավը ասորական լեզվով, իսկ մյուս մասերուն մեջ հելլենական դպրությամբ: Ծիսական ու պաշտամունքային դյուրություն կազմակերպեց: Սահմանեց նաև բարեկարգական կանոնական կանոններ, որոնք ետքեն ի մի հավաքվեցան. հավանաբար հավելյալ ձևի տակ, և կոչվեցան «Կանոնք Սրբոյն Գրիգորի Առաքելոյ Հայոց»:

Գրիգոր ծերության տարիներուն հատուկ հակամիտություն ցույց տվավ առանձնական ու ճգնողական կյանքի: Բայց իր առանձնացումի ընթացքին ալ չէր մոռնար իր ժողովուրդը, այլ հոգեկան ու ֆիզիքական նոր ույժեր ամբարելով կրկին կելլեր քարոզչական շրջագայության, իր աշակերտներով միասին, և կհաստատեր ամենքը հավատքի մեջ: Տրդատ նկատի ունենալով Լուսավորչի այս պարբերական մեկուսացումները, Կեսարիայեն բերել տվավ անոր որդիները, Արիստակեսը, որ արդեն իսկ կուսակրոն կյանք ընտրած էր, և Վրթանեսը, որ ամուսնացած և երկվորյակ զավակներու հայր եղած էր: Ասոնք ևս եպիսկոպոս ձեռնադրվեցան իրենց հորմեն և օգնական կարգվեցան անոր, Հայրապետանոցի և արքունիքին մեջ:

Գրիգորի վերջին տարիներուն, 325-ին, գումարվեցավ Նիկիո Տիեզերական ժողովը, որուն հրավիրվեցավ նաև ինք. բայց ծերության պատճառով չկրցավ երթալ, իր տեղ ղրկեց իր որդին Արիստակեսը: Երբ բերավ ան Նիկիո հանգանակը՝ Լուսավորիչ կնքեց զայն իր կողմե ավելցնելով. «Իսկ մենք փառատրեսցուք» փառատրական վերջաբանը, որ մինչև օրս կկրկնվի ս. պատարագի ընթացքին, հավատամքի վերջավորության:

Ս. Գր. Լուսավորիչ՝ Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալներու կողմե հաստատված Հայոց Եկեղեցին հիմնովին վերանորոգեց ու վերակենդանացուց: Ժամանակակից պատմիչին բառերով «զՀայաստան երկիրն պայծառացուցեալ՝ հանդերձ արքային Տրդատաւ՝ զամենայն աւուրս կենաց իւրոց ԼՈՒՍԱՒՈՐԷՐ... առ ի սթափել, զուարթացուցանել, եւ հաստատիմն առ խոստացեալ աւետիսն քաջալերել» (Ագաթ. էջ 654):

Ս. Գրիգոր լման քառորդ դար մը մեծ արդյունավորությամբ կառավարելե և ամրացնելե հետո Հայոց Եկեղեցին, առ Աստված փոխեցավ 326-ին իր առանձնացումի շրջաններեն մեկի ընթացքին և ոչ ոք լուր ունեցավ իր մահեն: Հովիվներ գտնելով անոր մարմինը թաղեցին զայն, առանց գիտնալու, թե որո՞ւն մարմինն էր: Տարիներ հետո հայտնվեցավ անոր թաղման տեղը և նշխարները, և մեծ հանդեսով փոխադրվեցավ ու թաղվեցավ **Թորդան** ավանը:

Հայաստանյայց Եկեղեցին ներկայիս երեք անգամ կկատարե Սուրբին հիշատակը: Առաջինը «ՁԱՐՁԱՐԱՆԱՑ ԵՒ ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊ» անունով՝ Մեծ Պահոց Զ կիրակիի նախընթաց շաբաթ օրը: Երկրորդը «ԵԼՆ Ի ՎԻՐԱՊԷՆ». Տոն Կաթողիկե Ս. Էջմիածնի նախորդ շաբաթ օրը: Երրորդը «ԳԻՒՏ ՆԸՇԽԱՐԱՑ». Զկնի Հոգեգալստյան Դ կիրակիի նախորդ շաբաթ օրը: Երեք տոներն ալ ունին իրենց նախընթաց շաբաթապահքերը: Օտար Եկեղեցիներ կտոնեն զայն սեպտ. 30-ին: Ս. Գրիգոր Լուսավորիչ անցած է գրեթե բոլոր համայնագիտարաններու մեջ. օրինակ Բրիտանական ու Կաթոլիկյան, ինչպես նաև Լարուսներու մեջ: Հիշված է նաև մեր ձեռքը գտնված Օքսֆորդյան և Սրբոց բառարաններու մեջ:

Գալով իր նշխարներուն այս մասին ընդարձակորեն կխոսվի ԼԻԱԿԱՏԱՐ վարք Սրբոցի մեջ (էջ 299—302): Ըստ այսմ բացահայտ է որ Ե դարուն արդեն իսկ Լուսավորչի նշխարը կա նաև Էջմիածին, աջի ձևին տակ միշտ պահված հայոց կաթողիկոսներու մոտ: Փոխադրված է Կիլիկիա ԺԱ դարուն, երբ Կաթողիկոսական Աթոռը այնտեղ հաստատված էր. գաղտնորեն կրկին Էջմիածին վերադարձվեցավ 1440-ական թվականներուն, երբ Աթոռը Էջմիածին վերադարձնելու ծրագիրներ կմշակեին. և մինչև օրս կպահվի Էջմիածնի մեջ իբրև Հայ Եկեղեցիի կարևոր սրբություններեն մեկը, որ կգործածվի Ս. Մյուռոնի օրհնության ընթացքին: Կիլիկիո Կաթողիկոսությունն ալ ունի իր «Ս. Գրիգոր Լուսավորչի աջը»: Երուսաղեմ կա շուրջ բթամատի մը մեծությամբ Ս. Լուսավորչի մասունք մը: Իսկ այստեղ, Իսթանպուլի մեր եկեղեցիներեն ոմանք ալ ունին Ս. Լուսավորչի մանր մասունքներ: Ասոնք և տակավին չհիշվածներ, ալգային շրջանակներու մեջ եղած մասունքներ են: Իսկ օտար շրջանակներու մեջ ևս կան Ս. Լուսավորչի կարևոր մասունքներ: Ըստ ԼԻԱԿԱՏԱՐ-ի հավաստումին, Բյուզանդիոնի կայսրերեն՝ Զենոն 474—491, ուղած է հայոց Բաբգեն կաթողիկոսեն Ս. Գրիգորի նշխարներեն մաս մը, և Բյուզանդիոն տանելով մեծ եկեղեցի մը շինած հանուն Ս. Գրիգորի:

Իսկ ներկայիս Նաբոլիի մեջ կգտնվի Ս. Գր. Լուսավորչի գլուխը, որ ըստ իրենց ավանդության, այսոկերամարտության շրջա-

նին՝ Ը դար՝ Ս. Բարսեղի կարգին պատկանող կարգ մը կոյսեր, երբ հարկադրվեցան հեռանալ Բիւզանդիոնեն, հալածանքներու պատճառով, իրենց հետ տարին Ս. Գրիգորի գլուխը քանի մը հարակից մասունքներով և անոր չարչարանաց գործիքներով. երբ հասան հարավ Իտալիա՝ անոր նշխարներեն մաս մը դրած են այդ շրջանի Ներետոն քաղաքը. իսկ անոր գլուխը բերած են մինչև Նաբոլի, և դրած՝ երևելի կուսաստանի մը մեջ, ուր ապա շինված է հոյակապ եկեղեցի մը հանուն Ս. Գր. Լուսավորչի, ուր կմնա և կհարգվի անոր գանկը մինչև այսօր: Նաբոլի քաղաքը կճանչնա զայն իբրև իր պաշտպաններեն մեկը: ԼԻԱԿԱՏԱՐ-ը միաժամանակ կհաստատե, որ Նաբոլիի մեջ կգտնվի նաև Ս. Գրիգորի արծաթյա կիսարձանը, զոր ուրիշ արձաններու հետ թափորի կհանեն քաղաքին մեջ Ս. Գենարիոսի (Նաբոլիի պաշտպան սուրբը) տոնին օրը:

Իսկ մենք՝ երբ 1955-ին այցելեցինք Հունաստանի աշխարհահռչակ **Աթոս Լեռ**—Այիոն Օրոս—կոչված վանաստանը, այստեղ ևս մեկի ցույց տվին թանկագին մետաղյա գլխաձև անոթի մը մեջ պահված գանկ մը, որուն գագաթի մասը միայն կերևեր, կափարիչի մը ներքև. և հավաստիացուցին թե Հայոց Ս. Գրիգոր Լուսավորչին գանկն է, Անիեն նախ Բիւզանդիոն բերված՝ այնտեղեն ալ Աթոս Լեռ փոխադրված:

Հոգի. Մկրտչի հետ առավելագույն շարական ունեցող Սուրբն է Լուսավորիչ մեր մեջ: Երեք տոներն ալ ունին իրենց լրիվ «Կանոն»-ները, այսինքն շարականներու լրիվ կազմը՝ իրենց օրհնություններով, հարցերով և յուր սարոք: Մուտն ի վիրապին օրհնությունը, «Այսօր զուարճացեալ» բաղկացած է 36 տուներե, որոնցմե յուրաքանչյուրը կսկսի հայ այբուբենի մեկ տառով: Իբրև նմոյշ այստեղ կդնենք անոր նվիրյալ **Մանկունք** կոչված շարականներեն ամենեն ծանոթը:

Հրաշափառ Աստուած, եւ միշտ բարեխնամող,
Որ յառաջ գիտութեամբ զփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ,
Ի Պարթեւական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր.
Վասն որոյ բարեխօսութեամբ սորա, Փրկիչ, կեցո զմեզ, այժմ եւ ի քո սահմանս
գալստեան:

Հրաշալի զարմացմամբ երանելին Սուրբ Գրիգոր,
Զանտանելի չարչարանս ի յանձն էառ.
Եւ երիւք հնգօք ամօք ի մէջ թունաւորացն բնակէր
Անդնդային տանջանօք ի վիրապին: Վասնորոյ...

Հրաշագործ քո բանիւդ եւ մեծ ողորմութեամբ,
Եւեալ բժշկէր զհարուածեալսն ի դիւրաբախ սաստիցն.
Երկրպագուս առնելով զամենեսեան Ս. Երրորդութեանդ: Վասնորոյ...

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ.—

Մեծափառ Աստված, և միշտ նախախնամող.
Քու կանխագիտությամբդ՝ Հայոց ազգին փրկության սկիզբ դրիր.
Ու Պարթևական մեղավոր ազգեն մեկի լուսավորիչ շնորհեցիր.
Ուստի անոր բարեխոսությամբ, Ով Փրկիչ, կյանք տուր մեզի
Այժմ և Քու սահմանդ գալուստիդ:

Զարմանահրաշ կերպով, երանելին Ս. Գրիգոր
Անտանելի չարչարանքներն հանձն առավ.
Եվ տասնհինգ տարիներ թունավորներու մեջ բնակեցավ,
Անդնդային վիրապին մեջ տանջանքով: Ուստի...

Հրաշագործ Քու խոսքովդ և մեծ ողորմությամբդ,
Ելավ, բժշկեց դևերեն զարնված հարվածյալները,
Երկրպագուներ ըրավ ամենքն ալ Ս. Երրորդությանդ: Ուստի...

Ս. Գր. Լուսավորչի պատմության ՍԿԶԲՆԱԿԱՆ և հիմնական աղբյուրն է ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍի Հայոց պատմությունը: Մեր ձեռքին տակ ունեցած ենք 1835-ին վենետիկյան տպագրությունը. այստեղ հիշված էջերը և հատվածները այն գրքեն են:

Կարևոր աղբյուրներ են նաև Զենոբ Գլակ և Մովսես Խորենացի պատմիչները: Հին հույն պատմիչներեն Ս. Լուսավորչի մասին խոսած են ՄԵՏԱՓՐԱՏԵՍ և ԱՆՏՈՆԻՄՈՍ: Լատիններեն՝ ԲՈԼԼԱՆԴՅԱՆՆ Հովհաննես Սոելտինգ Ը հատոր. սեպտ. 30, էջք 295—413:

Ներբողյան գրած են Ս. Գրիգորի մասին Հովհ. Ոսկեբերան Հայրապետ և մերիններեն Սարկավագ, Վարդան և Հովհաննես Երզնկացի վարդապետներ և ուրիշներ:

(«Հայագի սուրբեր», Իսթանպոլ, 1982, էջ 19—27)